

# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



## ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐ ԵՎՏԻՔՈՍԻ «ՅԱՂԱԳՍ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԲՆԱԳՐՈՒՄ

Հայերենի՝ հատկապես հին շրջանի նորակազմ բառերի թեման իր արդիականությունը երբևէ չի կորցնում: Միջնադարյան աղբյուրներում ու նաև արդի հայերենում շարունակ կարելի է հանդիպել նոր ստեղծված և նախկինում չարձանագրված բառերի: Վերջին 10 տարում լեզվական այս խնդրին նվիրված մի շարք հոդվածներ, մենագրություններ, բառարաններ են հրատարակվել<sup>1</sup>:

Տարբեր լեզվաբաններ նոր բառերը բնութագրելու համար կիրառում են տարբեր եզրեր՝ **նորակազմ**, **նորակերպ**, **նորահայտ**, **նորահնար**<sup>2</sup>, **նորամուտ**, **նորաբնույթ**, **նորաստեղծ**, **նոր բառեր**: Հ. Աճառյանն օգտագործում է նաև **նորագույն**, **նորածին** տերմինները:

Նոր բառերի հայտնաբերման հարցը սպառված չէ հատկապես V-VI դարերի թարգմանական աղբյուրների համար: Դրանցից մեկի՝ **Եվտիբոսի «Յաղագս զանազանութեան բնութեան եւ առանձնատրութեան»**<sup>3</sup> երկի հայերեն թարգմանութեան մեջ հանդիպող նորահայտ բառերն էլ կփորձենք ներկայացնել:

Ո՞վ է Եվտիբոսը: Ըստ աղբյուրների՝ հույն հոգևոր հայտնի այս գործիչն ապրել է 512-582 թթ.: Եղել է Կ. Պոլսի պատրիարք (552-565 թթ.), կարևոր դեր է խաղացել 553 թ. տիեզերական ժողովի կազմակերպման մեջ: Հեղինակի մասին հիշատակություն ունի Հովհաննես Եփեսացի մատենագիրը, որը և հաղորդում է, թե Եվտիբոսն իր այս գրությունը դավանաբանական նկատառումներով «սկսանէր առ մեծամեծս և առ երևելի տիկնայս քաղաքին առաքել և խնդրէր իսկ, զի ի ձեռս

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, Նորահայտ բառեր գրաբանում, Եր., 2007, **Լ. Հովհաննիսյան**, Գրաբարի բառապաշարը, Եր., 2007, **Լ. Խաչատրյան**, Ղևոնդ վաղապետի Պատմության երկի բառային նորակազմությունները, ԲԵՀ, 1998, թիվ 3, **Վ. Համբարձումյան**, Նորահայտ բառեր «Յայսմատրք»-ի մեջ, «Էջմիածին», 1998, թիվ 5 (թեև պետք է ասել, որ այստեղ նշած նորահայտ բառերից մի քանիսը ընդգրկված են ՆՀԲ-ի և ԱԲ-ի մեջ), **Հ. Միրզոյան**, Նարեկացու բառաշխարհը, ԲԵՀ, 2005, թիվ 1, **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան (նոր բառեր, իմաստներ, դարձվածներ, բառակապակցություններ, արտահայտություններ, հասկացումներ), Եր., 2002, **Փ. Մեթիսյանյան**, Նոր բառերի բացատրական բառարան, Եր., 1996, 3000 բառային միավոր, **Ա. Մարության**, Նոր բառեր և նորաբանություններ, ԲԵՀ, 1998, թիվ 3, **Վ. Մեղրոնյան**, Բառային անհատական նորաբանությունների դասակարգման փորձ, ԲԵՀ, 2001, թիվ 3, **Ա. Մարտիրոսյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Եր., 2007:

<sup>2</sup> Արսեն Բագրատունին առանձին հոդված ունի թեմային նվիրված, տե՛ս «Նորահնար բառերու վրայ», «Բազմավեպ», 1845:

<sup>3</sup> «Եւտիբի Եպիսկոպոսի Կոստանդինուպոլսեցոյ Յաղագս զանազանութեան բնութեան եւ առանձնատրութեան», «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1969, № 1, էջ 17-40, № 2, էջ 159-198, բնագրի հրատարակիչ՝ Հ.Ներսէս Ալիմեան:

առեալ ընթերցցին և հաւանեալ խոստովանեսցին ըստ նորին մտացն...»<sup>4</sup>: Անշուշտ գրվածքը հասցեագրվել է նաև հայերին, որոնք և VI դարում (ըստ այլ տեսակետի՝ VII կամ նույնիսկ VIII դարերում) հայերեն են թարգմանել այն:

Եվտիքոսի «Յաղագս զանագանութեան» գրութեան հունարեն բնագիրը կորած է և պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ: Ներսես Ալիկյանը բնագիրը հրատարակել է Վիեննայի Մխիթարյան միաբանության № 623, Մաշտոցի անվ. Մատենադարանի № 500 և Փարիզի Ազգային մատենադարանի № 130 ձեռագրերի հիման վրա: Ն. Ալիկյանը Եվտիքոսի այս երկին անդրադարձել է նաև այլ առիթով. «Գրութեան սկզբնագիրը կորսուած է,- գրում է բանասերը,- բայց բարեբախտաբար պահուած է հայերէն թարգմանութիւնը, որ թէև հազուագիտ մնացորդ մը քաղկեդոնական գրականութեան, կրնայ այլ և այլ տեսակետներէ հետաքրքրական նկատուիլ: Չմեզ կը հետաքրքրէ **անոր լեզուն, որ յունարան է**»<sup>5</sup>:

Հայ բանասերները Եվտիքոսի երկի լեզուն բնութագրելու այլ առիթներ էլ են ունեցել: «Ճառիս թարգմանութիւնը հին և դասական ըլլալէ հեռի է, վասն զի **լի է յունարանութեամբ, մթին յոյժ ու դժուարահաս**», գրում է Բ. Սարգիսյանը<sup>6</sup>: Ըստ Նորայր Արք. Պողարեանի՝ «Թարգմանութիւնը գլուխ հանուած է Կ. Պոլսոյ մէջ, ըստ երևոյթին յունագէտ եւ քաղկեդոնական հայու մը կողմէ: Առաջին առթիւ մեր ուշադրութիւնը կը գրաւէ նորակերտ բառերու բազմութիւնը, որոնց մեծ մասը ձևավորուած է **սորկական հեթանոսութեամբ յունական բառակերպութեան**»<sup>7</sup> (ընդգծումը հեղ.՝ Ն.Պ., Բ.Ա.):

Թարգմանական այս երկի լեզվի մասին պատկերացում կազմելու համար, կարծում ենք, տեղին կլինի մեջբերել մեկ-երկու հատված.

«Իսկ զի պիտի ի ձեռն յատկացելոց նշանակաց անշփոթ սրբոյ Երրորդութեանն զընտրութիւնն ունելով զհասարակատես մակատեսեալն, որպիսի զանստացական ասեմ կամ գեր զամենայն եղանիլ ըմբռնումն. կամ թէ զինչ այսպիսի ինչ ոչ շարապարտեսցուք յատկացելոյն զընտրումնն: Բայց խնդրեսցուք միայն ի ձեռն որոյ իւրաքանչիւր միտք լուսափայլեալ՝ անխառն գյարատեսութիւնս որոշեսցէ» (էջ 29-30):

«Բայց եւ աստուածատեսակազոյնք ծնունդը նախահարն ոչ ախորժեն ծասկել զհարստաջիւն, զխոհականն որ յաղագս Աստուծոյ անճառական բան իբր անկերակրելի զսա գիտելով անխոտոր եւ անբերելի խոհման մարդկայնոյ» (էջ 197-198):

Բանասիրության մեջ կարծիք է հայտնվել, որ հունարան հայերենով ստեղծագործող հեղինակները կամ թարգմանիչները հաճախ անհաղորդ էին միմյանց երկերին: Այդ պատճառով նոր հնարված, պատճենված շատ բառեր սահմանափակվել են մեկ բնագրում կիրառվելով, տարածում չեն գտել և մնացել են սոսկ իբրև հեղինակային նորակազմություններ: Ահա նման բառերի փունջ է ներկայացվում ստորև՝ քաղված Եվտիքոսի «Յաղագս զանագանութեան»

<sup>4</sup> **Հ. Պ. Տեր-Պողոսեան**, Եւտիքոս Պատրիարք Կ. Պոլսի, «Հանդէս ամսօրեայ», 1969, № 1, էջ 1-17:

<sup>5</sup> **Հ. Ներսէս Ալիկեան**, Դասական հայերէնը և Վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 112-118:

<sup>6</sup> **Հ. Բ. Սարգիսեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանի, հատոր Բ, Վենետիկ, 1924, էջ 1070-1071:

<sup>7</sup> **Նորայր Արք. Պողարեան**, Վանատուր (ուսումնասիրությունների և հոդվածների ժողովածու), Երուսաղէմ, 1993, էջ 121:

երկից: Բառացանկում ընդգրկվել են այն բառերը, որոնք ավանդվել են բացառապես «Յաղագս գանազանութեան» երկով, այլ աղբյուրներում չեն հանդիպել և հայերենագիտության հեղինակավոր բառարաններում վկայված չեն: Դրանց մի մասը հեղինակային նորակազմություններ են, անգամ դիպվածային բառեր՝ ստեղծված միայն այս երկի համար:

Այս ամենով հանդերձ՝ բառացանկը, կարծում ենք, որոշակի օգտակար նյութ կարող է մատուցել հին հայերենի բառապաշարը և հատկապես հունարան հայերենը ուսումնասիրողների համար:

**Ն. Բ. ՊՈՂՈՍՅԱՆ, Բ. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ**

\* \* \*

ԱՂԱԽԹԱԲԱՐ, մ. Աղոթքի պես, աղոթաբար: Այլ է Տէր բոլորեցուն, գոր մոզքն խնդան, աղաթաբար երկրպագելով (995)\*:

ԱՆՋՈՒԳԱԴԱՐՁ, ա. Անկրկնելի: Գոյ է, վասն զի է. նախկին իբր միակ եւ անգուգադարձ, անպատճառ իբր ոչ գոք (1129):

ԱՆԿՐԱԴՈՐԱԿԱՆԱԲԱՐ, ա., մ. Անկրելի կերպով, աններգործաբար: Եւ երկուս ծնունդս Քրիստոսի ասեմք. զմինն յԱստուծոյ Հարւէ անժամանակաբար եւ անմարմնապէս եւ անկրաւորականաբար... (369):

ԱՆՀԵՏԱԶԱԻՏԱԿԱՆ, ա. Անքննելի: Յանհետազատական մաքառմանէ հայցէ արձակիլ (1154):

ԱՆՅԵՂԱՆԱԿԵԼԻ, ա. Անփոփոխ(ելի): Արդ եղեն բնակելոյն զարավիզն եղեալ՝ զանշփոք եւ անյեղանակելին եւ զաներկառակելին միաւորութեանն հանդիպեցուցանէ (531):

ԱՆՊԱՐԸՄԲՈՆԵԼԻ, ա. Անըմբռնելի: Եւ է այս աստուածայինն անհասանելի եւ անպարըմբռնելի անբաւանդակական գոյութիւն (1117):

ԱՆՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. Անբովանդակություն, անընդգրկելի բան: Եւ ձկտեցուցանէ զխնդիրն ի խորութիւն անպարունակութեան նորա (1143):

ԱՆՎԵՐԱԶԵԼԻ, ա. Անտեսանելի (°): Ստուերածի եւ գիշերանայ յանվերաչելին եւ յաննշոյլն նորա ներակնելով անհասութեանն անդունդ (1144):

ԱՌԸՆԹԵՐԱՅՈՒՑԱՆԵԼ, պր. Ներկայացնել, մոտեցնել (°): Այլ մեկնեալ ի պարունական նշանակութեանցն պարագրեցելոց իրաց ոմանց նշանակալ ի ձեռն անուանցն առընթերացուցանէ (206):

ԱՌԸՆԿԱԼՈՒԼ, նր. Ընդունել: Յորժամ Որդին Աստուծոյ անդուստ ի Կուսէն՝ յորմէ ծնաւ զմարմինն առընկալաւ (1022):

ԱՌՍԱԾՈՒՅԵԱԼ, չր. Կպած: Բնութիւն վարսեալ բեւեռաք կախեցաւ զփայտէ խաչին և խոցելոյ կողին առմածուցելոյ խաչին ի ձեռն զեղարդեան զինուորին իմասցի, ուստի արին եւ ջուր հոսեցաւ (1037):

ԱՐՏԱԿԱՅ, գ. Հեռու: Եւ ոչ բաղկացեալն տեսանելով ի բաղկացելոյն արտակայ է (387):

---

\* Հոդվածում բերվող բնագրային հղումները ներկայացնում ենք ըստ «Հանդէս ամօրեայի»-ի հրատարակության (1969, թիւ 1-2) տողերի:

ԲԱՐԵՀԱԲԱՍԱՐՈՒԹԻՒՆ, գ. Հավասարություն: Եւ բարեհաւասարութեամբ հայրն, որպէս զիմաստուն ասէ առ իմաստասէրն (463):

ԲԱՅԱԳԱՍԵԼ, նր. Բխեցնել, բացատրել: Քանզի առ յոչընչէ բացադատեալ մտածութիւն զոգիսն ըմբռնեալ յաղագս հաւատալ զնա (235):

ԲԵՐԱԿԱՆԵՆ, (°): Չի մարդկայինս մերկ առ աստուածութիւնն ցոյցն ոչ ունի կարութիւն յայն բերականեն նորա տապացելոյ վերացումանէ պատահէ թառամիլ խոհարարն (1078):

ԲՈՒՆՈՐԱՀԱՏ, ա., մ. Բոլոր մասերով, ամբողջությամբ: Նաեւ ոչ բոլորահատ ի ձեռն հատման զարութիւն մատուցանենք սոցա (298):

ԵԿԱԿԱՑԵԱԼ, չր. Եկած, մնացած: Ապրեցելոյ այսուիտեւ յատկութեանն երկաքանչիւրոյ բնութեանն եւ առ մի դէմս եկակացելոյ ամբարձալ յաստուածութենէն նուաստութիւնն (967):

ԵՆԹԱԲԵՐԵԼ, նր. Ներկայացնել, վերագրել: Արդ վասն զի ներմարդանալոյն կատարումն եւ մերոյին էութեան ճառումն ենթաբերեալ յասելն մարմնացելոյ (454):

ԵՈՒԿԱՆ, ա. Եռակի, երեքական: Քանզի եւ ոչ եռական կատարումն Բրիստոս Աստուածն մեր ըստ որում ոմանք խելագարեն, որպէս Պետրոս եւ Պաւղոս (472):

ԸՆԳԴԻՍԱԽԱՂՈՒՄՆ, գ. Ընդդիմախոսելը, ընդդիմանալը: Եւ այս է աստուածայինն անհասանելի եւ անպարըմբռնելի անբաւանդակական գոյութիւն եւ մարդկային տկարութեան ընդդիմախաղումն եւ հարցաքննութիւն (1118):

ԸՆՏՐԱԲԱՐ, ա., մ. Ընտրողաբար, ընտրովի: Որ ի հաւատսն աւանդեցաւ դէմք իւրաքանչիւր յատուկ ծանաւթութեամբքն ընտրաբար ըմբռնմամբք զետեղեալ (263):

ԼՍԵԼԱԿԱՆ, ա. Լսելի: Եւ այսոցիկ երկուց լսելական անցից ի մեզ բացեցելոց (318):

ԽԱՆՉՈՐՈՎԱՅՆ, ա. Ուռած կամ ախտահարված որովայն ունեցող: Իսկ զպնչատն, եւ զխանչորովայնն եւ որ շուրջ զնովիմք տեսակութիւնք. Եւ որ ինչ այսպիսի առընթեր են՝ բարբանջումն համարելով (668):

ԽՈՇՏՈՒՄՆ, գ. Խեղվածություն, պատուհաս: Երբ լուծցէ պատեռագմն, ողջացի եւ խոշտումն (1178):

ԾԱՅՐԱԼԻԱԳՈՅՆ, ա. մ., Լիապես, ամբողջովին: Կայ այսուիտեւ ասել եւս ծայրալիագոյն (1112):

ԾՆԵԼԱԿԱՆ, ա. Ծնված: Արդ զի է լոյս ճշմարիտ անսկիզբն Հայր, իսկ ծնելական լոյս՝ Որդին (116):

ԿԱՐԿԱՍԻՏ, ա. Ոլորված, կծկված: Խայտասցէ կաղն, պարզեցի կարկամիտ ձեռն (1179):

ՀԱՂՈՐԳԱՊԷՄ, ա., մ. Միաբանությամբ, ամբողջությամբ: Այլ հաղորդապէս ճշմարտութիւնն քարոզեցի (833):

ՀԱՍՏՉԱՐՉԱՐԱԿԱՆ, ա. Չարչարակից: Չերկաքանչիւրն գոյ Աստուած իմանալի. ի սքանչելութեանցն ներգործութենէ. իսկ մարդ երեւելի ի համաչարչարական ի բնութենէ (573):

ՀԱՇՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Համերաշխություն, խաղաղություն: Վակժուժեցի եւ ներկացի, ներկագործաբար եւ մշտնջենապէս շաղկացեալ եւ ներմածեալ սիրով եւ անլուծական հաշտականութեամբք (1182):

ՀԱՐՍՏԱՉԻԼ, գ. Ուժ, զորություն, փխր.՝ բարձր, վեհ: Բայց եւ աստուածատեսակագոյնք ծնունդք նախահարն ոչ ախորժեն ծասկել զհարստաջիւն, զխտականն (1188):

ՀԱՐՑԱ ՈՒՉԵԼ, նր. Քննել, հարցուփորձել: Իսկ յորժամ զանբերելին նորա հարցախուզէ անբաւութիւն (1142):

ՀՐԱՍԱՆԱՏՈՂՈՒԹԻՒՆ, գ. Շաքով՝ կարգով հրաման, փխր.՝ պատվերով: Արդ ոչ եռամասնակ Քրիստոս կատարումն հրամանատողութեամբ եւ կամ դրութեամբ եւ կամ սահմանադրութեամբ, որպէս ոմանք դանդաչէն (533):

ՄԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. Հետևություն: Քանզի անհնարին է մարդկային մտացս ի ձեռն միոյ շարժման եւ մակարկութեան եւ տեսութեան, պարզելով զանագանի ըստ բնութեան պարըմբոնել (309):

ՄԻԱԾՆԱԲԱՐ, մ. Միածին կերպով: Եւ ընդ իւր ճանաչելով միայն միածնաբար յանձնէն լոյս ծագեալ (254):

ՄԻԱՇԱՐԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. Միաձայնություն, շարունակություն: Եւ զնոյն խոստովանելով Որդի եւ Տէր զՅիսուս Քրիստոս միաշարաձայնութեամբ ամենեքեան ուսուցանենք կացեալ զնոյն յաստուածութեանն (928):

ՅԱՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ, գ. Սշտատեսություն: Բայց խնդրեսցուք միայն ի ձեռն որոյ իւրաքանչիւր միտք լուսափայլեալ՝ անխառն գյարատեսութիւնս որոշեսցէ (246):

ՅԵՂԱԿԱՆԵԼԻ, ա. Փոփոխելի: Եւ կամ յայլմէ առկայութենէ կամ գոյութենէ ասել եղև եւ կամ յեղականելի եւ փոփոխելի զՈրդին Աստուծոյ, զայնպիսին նզովէ տիեզերական եւ առաքելական եկեղեցի:

ՆԵՐԱՆԿԵԱԼ, ա. Ներս բերված՝ ընկած: Նոյնպէս եւ յաղագս ներանկելոյս ասենք բնութեանս (164):

ՆԵՐԿԱԳՈՐԾԱԲԱՐ, մ., ա. Ներկայում գործող: Վակժուժեսցի եւ ներկասցի, ներկագործաբար... (1181):

ՆԵՐՀԱՆԴԻՊՈՂ, ենթ. դերք. Պատահող, հանդիպող: Բազում ներհանդիպողացն պատճառ մոլորութեան բերեալ մատուցին (5):

ՆԵՐՄԱԾԵԼ, չր. Տարածվել, կաչել: Վակժուժեսցի եւ ներկասցի, ներկագործաբար եւ մշտնջենապէս շաղկացեալ եւ ներմածեալ սիրով (1182):

ՆԵՐՄՏՈՒԹԻՒՆ, գ. Ներքին էություն: Քանզի եւ երկուս ի վերայ նորա իմանամք եզական բնութիւն... այլ ի սոսկ բաժանելով ներմտութիւնս (296):

ՇԱՂԿԱՑԵԱԼ, ա. Կապված, կապակցված: Վակժուժեսցի եւ ներկասցի, ներկագործաբար եւ մշտնջենապէս շաղկացեալ եւ ներմածեալ սիրով (1181):

ՇԱՐԱԴԻՍԵԼ, չր. Կարգով՝ շարքով դիմել, դասավորել: Ըստ նմին միմեամբք շարադիմեալ յաշխարհս (495):

ՇԱՐԱԽՄԲԵԼ, չր. Կարգով կազմվել՝ խմբվել, շար(վ)ել: Եւ գտեղին ասելով եւ զբարոյիցն ծանաթութիւնսն եւ որ ինչ միանգամ յարտաքնոցն շարախմբեալ որոշեցաւ նմա (626):

ՇԱՐԱՄԱՐՏԻԼ, չր. Շարունակ մարտնչել: Եւ վասն ճշմարտութեանն շարամարտեցաւ (738):

ՇԱՐԱՊԱՐԱՌԵԼ, նր. Բովանդակել, ըստ կարգի պարունակել: Կամ թէ զինչ այսպիսի ինչ ոչ շարապարառեսցուք յատկացելոյն զընտրումնն (244):

ՈՒԺԿԱԼ, գ., ա. Ունակ, կարող (°): Եւ սակայն եւ ուժկալ է (1109):

ՈՒԺԿԱԼԵԼ, չր. Չորություն ստանալ (°): Որովք ուժկալեսցէ եւ ոչ խաշատեսցի սուրբն (1102):

ՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ, գ.: Եւ զի՞նչ մարդոյն ուժկալութիւն եւ հերքումն. եւ զի՞նչ աստուածայինն յայտասիկ յաղթութիւն հասարակ աստանաւր զմարդկայինն եւ ըստ իւրաքանչիւրում որ յաղագս Աստուծոյ է (1113):

ՊԱՐԸՄԲՈՒՆԵԼ, չք. Լրիվ պարունակել՝ պարփակել: Պարզելով զանագանի ըստ բնութեանն պարըմբունել (310):

ՊԱՐՍՓԱԾԱՆԻԼ, բ. (°): Եւ պարսպեսցէ զսուրբն զգալեան պարսփածանի զինքեամբ (1101):

ՍԱՍԱՆԱԿՅԵԼ, նր. Կցել, կազմել: Ի տուրնջենէ ի զիշեր փոխել զտարրս ամենայն սասանակցեալ (1011):

ՍԵՒԵՌԱՆԵԼ, նր. Գամել, փակցնել: ...Սեւեռանել բեւեռաք եւ զդրախտին դրունս բանալ հաւատով աւագակին (1011):

ՍՏՈՐԱԿՈՉԻԼ, նր. Անվանակոչ(վ)ել (°): Քանզի ստորակոչի Աստուած հաղորդիլ զանուն մարդոյն (1158):

ՍՏՈՐԱՊԻՏԱԿՈՒԹԻՒՆ, գ. (°): Քանզի ի վերայ մեր ստորապիտակութիւն, զիսն յոգիսն՝ չբերէ (165):

ՍՏՈՒԵՐԱԾԻԼ, չք. Մթնել, սովեր թողնել: Ստուերածի եւ զիշերանայ յանվերաչելին եւ յաննշոյն նորա ներակնելով անհասութեանն անդունդ (1143):

ՍՐԲԱՅՉՈՒԹԻՒՆ, գ. Սրբություն, սրբացնող բան, Ս.Հոգի: Քանզի ոչ իմանալով մեր զբացորոշեալ յաղագս իւրաքանչիւր ծրագրութեանցն, որպիսի հայրութեան եւ որդութեան եւ սրբացչութեան (133):

ՎԱՅՐԱՅԱՐՉԱԿԻԼ, չք. Հարձակվել, հալածել: Բայց եւս որ սքանչելին հարցափորձին հասարակաբար զանուն եւ զի՞նչ սա վայրայարձակելովն ասացուած իբր խոնարհեալ բռնահարէ (1157):

ՎԱՅՐԱՐԿԵԼ, չք. Վայր զցել՝ ընկնել: Կարող իմաստնական եւ զաւրաւոր կամաքն՝ վայրարկեաց առ ի յաւարտումն էիցս (649):

ՎԵՐԱԿԱՌԱՆԻԼ, չք. Ի վեր ձայնել, հառաչել: Եւ սա վերաբարձմամբ ցնա վերակառանի (1158):

ՎԵՐԱՄԲԱՐՉՈՒՄՆ, գ. Վեր բարձրացում: Եւ սա վերամբարձմամբ ցնա վերակառանի (1158):

ՎԵՐԱՆԻԼ, չք. Բարձրանալ: Արդ զի ի մատնիլ ասի. եւ զինքն մատնեալ գրեալ է, եւ յարուցանիլ ի Հաւրէ եւ վերանիլ (421):

ՎԵՐՆԱՔԵՐ, գ., ա. Հարդարված, կոկիկ (°)՝ իբրև հականիշ բացատ (դրսի, բացօթյա) բառի (գուցե նաև բարձր°): Վայրարկեաց առ ի յաւարտումն էիցս. զթեթեւն, զծանրն, զխոնաւն, զչորն... զվերնաքերն, զբացատն (652):

**Н. Б. ПОГОСЯН К. М. АЙВАЗЯН — Новые слова в сочинении Евтимия “О разнообразии...” («Յաղագս զանազանութեան...»).** — В древнеармянском выявляются все новые и новые слова, не зафиксированные авторитетными словарями армянского языка. В настоящей статье представлены новые слова, обнаруженные в относящемся к VI в. армянском переводе сочинения греческого автора.

<sup>9</sup> Հավանական է «զի անհոգիսն...» տարըմբերցումը, թեև հստակ գրված է յոգիսն, այլ ոչ հոգիսն: